Հավելված N 3

# Վայոց Ձորի մարզի համայնքների ֆինանսաբյուջետային նկարագիրը

1995թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ Վայոց Ձորի մարզի կազմի մեջ մտնում են 44 համայնքներ, որոնցից 3-ը քաղաքային, իսկ 41-ը գյուղական համայնքներ են: Ընդհանուր թվով Վայոց Ձորի մարզում գոյություն ունեն 55 բնակավայրեր: Հայաստանի 10 մարզերի շարքում Վայոց Ձորի մարզը թվով ամենաքիչ համայնքներ ունեցող մարզն է:

Վայոց Ձորի մարզին ընդհանուր առմամբ բաժին է ընկնում համայնքների ընդհանուր բյուջեների եկամուտների ամենափոքր մասը՝ 2006 թ. կազմելով 4.0 %, 2007-ին՝ 7.5 % (2007-ին այս ցուցանիշով Վայոց Ձորի մարզը մի փոքր գերազանցել է Արագածոտնի և Սյունիքի մարզերի համապատասխան ցուցանիշներին), 2008-ին՝ 3.4 %, 2009-ին՝ 3.8%, 2010-ին՝ 3.0% :

Մարզի համայնքների բյուջեների եկամուտները ձևավորվում են հիմնականում պետական բյուջեից ստացվող պաշտոնական տրանսֆերտների հաշվին (որոնք 2006-2010թթ. կազմել են ընդհանուր եկամուտների շուրջ 50 %-ը և ավելին), իսկ սեփական եկամուտները՝ կապիտալի գործառնություններից եկամուտների (որոնք նույն տարիներին կազմել են ընդհանուր եկամուտների շուրջ 10 %-ից 30 %-ը, իսկ սեփական եկամուտների շուրջ 38 %-ից մինչև 60 %-ը) հաշվին (տես աղյուսակ 1): Նշված տվյալները վկայում են նախ մարզի համայնքների ֆինանսական անկախության, ապա նաև եկամտի կայուն աղբյուրներով ապահովվածության ցածր մակարդակի մասին:

Աղյուսակ 1. Վայոց Ձորի մարզի համայնքների բյուջեների եկամուտների կառուցվածքը

| Եկամուտներ | Տարիներ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2006 թ. | | 2007 թ. | | 2008 թ. | |
| | Գումար (հազ. դր.) | Տես. կշիռ (%) | Գումար (հազ. դր.) | Տես. կշիռ (%) | Գումար (հազ. դր.) | Տես. կշիռ (%) |
| **Ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ** | ***1,088,553.5*** | ***100 %*** | ***2,520,546.7*** | ***100 %*** | ***1,124,101.4*** | ***100 %*** |
| 1. Հարկային եկամուտներ | 107,815.5 | 9.9% | 130,789.2 | 5.2 % | 166,837.9 | 14.8 % |
| Այդ թվում՝ | *45,308.0* | *4.2 %* | *54,023.6* | *2.1 %* | *78,066.1* | *6.9 %* |
| 1.1. Հողի հարկ | *62,507.5* | *5.7 %* | *76,765.6* | *3.1 %* | *88,771.8* | *7.9 %* |
| 1.2. Գույքահարկ | 10,563.4 | 1.0 % | 14,358.1 | 0.6 % | 17,653.1 | 1.6 % |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. Տուրքեր | *6,677.5* | *0.6 %* | *7,816.7* | *0.3 %* | *8,219.8* | *0.7 %* |
| Այդ թվում՝ | *3,885.9* | *0.4 %* | *6,541.4* | *0.3 %* | *9,433.3* | *0.9 %* |
| 2.1. Պետական տուրքեր | 107,179.7 | 9.8 % | 76,079.4 | 3.0 % | 116,272.1 | 10.3 % |
| 2.2. Տեղական տուրքեր | *19,568.5* | *1.8 %* | *30,859.8* | *1.2 %* | *38,194.8* | *3.4 %* |
| 3. Ոչ հարկային եկամուտներ | 330,488.2 | 30.4 % | 254,055.3 | 10.1 % | 190,458.2 | 16.9 % |
| Այդ թվում՝ | 532,506.7 | 48.9 % | 2,045,264.7 | 81.1 % | 632,880.1 | 56.3 % |
| 3.1. Պետության կողմից պատվի-րակված լիազորությունների իրակա-նացման համար ստացվող միջոցներ | *284,992.3* | *26.2 %* | *358,359.4* | *14.2 %* | *418,658.4* | *37.2 %* |
| 4. Եկամուտներ կապիտալի գործառնություններից | *246,910.2* | *22.7 %* | *1,513,342.4* | *60.0 %* | *210,216.5* | *18.7 %* |

Հարկ է նշել, որ առանձին համայնքներում անհամեմատ ցածր է ֆինանսական անկախության աստիճանը, և երբեմն համայնքների բյուջեների եկամուտները գրեթե ամբողջությամբ ձևավորվում են պետական բյուջեից ստացվող պաշտոնական տրանսֆերտների հաշվին: Այսպես, մարզի գյուղական համայնքների 2008թ. բյուջեների եկամուտների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ.

- ***Սերս, Եղեգիս, Սալլի, Գնդեվազ*** համայանքներում **(4 համայնք)** պետական բյուջեից ստացվող պաշտոնական տրանսֆերտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ կազմել է 95 % և ավելի
- ***Մարտիրոս, Արփաբույնք, Թառաթումբ, Մալիշկա, Աղավնաձոր համայնքներում (5 համայնք)***՝ 80 – 90 %
- ***Շատին, Քարագլուխ, Փոռ, Խաչիկ, Գլաձոր, Հերմոն*** համայնքներում ***(6 համայնք)***՝ 70 – 80 %
- ***Նոր Ազնաբերդ, Ազատեկ, Ելփին, Խնձորուտ, Արփի, Աղնջաձոր, Ռինդ, Զառիթափ, Վերնաշեն, Հորբատեղ համայնքներում (10 համայնք)***՝ 60 – 70 %
- ***Գոմք, Չիվա, Ագարակաձոր, Արենի, Հերհեր, Գետափ, Բարձրունի համայնքներում (7 համայնք)***՝ 50 – 60 %
- ***Վարդահովիտ, Գնիշիկ, Հորս, Արտավան, Գողթանիկ համայնքներում (5 համայնք)***՝ 40 – 50 %
- ***Կարմրաշեն, Զեդեա, Սարավան, Արին համայնքներում (4 համայնք)***՝ 10 – 30 %

Ընդ որում, բացառությամբ թվով ***11 համայնքների՝ Գնդեվազ, Մարտիրոս, Աղավնաձոր, Խաչիկ, Արփաբույնք, Բարձրունի, Նոր Ազնաբերդ, Խնձորուտ, Ելփին, Կարմրաշեն, Արտավան,*** մնացյալ համայնքներում պետական բյուջեից ստացված պաշտոնական տրանսֆերտներն ամբողջությամբ կազմում են ֆինանսական համահարթեցման սկզբունքով ստացվող դոտացիաները:

Մարզի գյուղական համայնքների 2006-2010թթ. բյուջեների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերևում նկարագրված իրավիճակը, որոշ տարբերություններով, բնորոշ է նաև այդ տարիներին:

Ինչ վերաբերվում է քաղաքային համայնքներին, ապա այստեղ նույնպես բարձր են պետական բյուջեի ստացվող պաշտոնական տրանսֆերտների և համապատասպանաբար, ցածր սեփական եկամուտների տեսակարար կշիռները (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Վայոց Ձորի մարզի քաղաքային համայնքների բյուջեների առանձին եկամտատեսակների տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտների կազմում (%)

| **Եկամուտներ** | **Եղեգնաձոր** | | | **Ջերմուկ** | | | **Վայք** | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2006 | 2007 | 2008 | 2006 | 2007 | 2008 | 2006 | 2007 | 2008 |
| 1. Հարկային եկամուտներ | 13.1 | 8.5 | 16.8 | 6.5 | 2.1 | 16.4 | 13.0 | 16.5 | 16.8 |
| Այդ թվում՝ | *2.4* | *1.5* | *4.1* | *0.9* | *0.4* | *4.4* | *1.0* | *1.0* | *1.5* |
| 1.1. Հողի հարկ | *10.7* | *7.0* | *12.7* | *5.6* | *1.7* | *12.0* | *12.0* | *15.5* | *15.3* |
| 1.2. Գույքահարկ | 4.2 | 2.5 | 5.9 | 0.5 | 0.2 | 2.0 | 3.9 | 5.0 | 4.8 |
| 2. Տուրքեր | *3.7* | *2.0* | *3.8* | *0.3* | *0.1* | *0.6* | *2.7* | *3.6* | *3.0* |
| Այդ թվում՝ | *0.5* | *0.5* | *2.1* | *0.2* | *0.1* | *1.4* | *1.2* | *1.4* | *1.8* |
| 2.1. Պետական տուրքեր | 6.6 | 2.6 | 7.1 | 9.0 | 1.5 | 22.1 | 9.0 | 9.7 | 11.6 |
| 2.2. Տեղական տուրքեր | *2.1* | *1.3* | *2.7* | *0.6* | *0.6* | *4.1* | *3.2* | *4.0* | *4.1* |
| 3. Ոչ հարկային եկամուտներ | 18.0 | 13.7 | 20.8 | 75.4 | 9.3 | 45.0 | 30.4 | 7.5 | 9.3 |
| Այդ թվում՝ | 58.1 | 72.7 | 49.4 | 8.6 | 86.9 | 14.5 | 43.7 | 61.3 | 57.5 |
| 3.1. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար ստացվող միջոցներ | *38.8* | *23.7* | *49.2* | *8.6* | *2.2* | *14.2* | *42.4* | *52.4* | *55.8* |
| 4. Եկամուտներ կապիտալի գործառնություններից | *19.1* | *48.3* | - | - | *75.9* | - | *1.3* | *5.8* | - |

Մարզի համայնքների բյուջեների ծախսերի զգալի մասը՝ 2006-ին 34.6 %-ը, 2007-ին 74.3 %-ը, 2008-ին 42.0 %-ը, 2009-ին՝ 34.3%-ը, 2010-ին՝ 42.3%-ը բաժին է ընկնում թվով 3 քաղաքային համայնքներին, որոնցից Ջերմուկ համայնքին բաժին է ընկնում ծախսերի համապատասխանաբար 17.6 %-ը, 63.7 %-ը ,27.0 %-ը, 18.4%-ը և 17.6%-ը::

Վայոց Ձորի մարզում համայնքների կողմից ծառայությունների մատուցման մակարդակի մասին որոշակի պատկերացում կարելի է կազմել համայնքների բյուջեների ծախսերի՝ ըստ գործառնական դասակարգման ոլորտների վերլուծության միջոցով: Մարզի համայնքների 2006-2010 թթ. բյուջեների ծախսերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքների բյուջեների միջոցների գրեթե կեսը ծախսվում է ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների վրա: Միջոցների մյուս կեսը հիմնականում բաշխվում է հինգ ուղղությամբ, այն է՝ կրթության և գիտության, մշակույթի, տեղեկատվության, սպորտի և կրոնի, բնակարանային կոմունալ տնտեսության, տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի ոլորտների և հիմնական խմբին չդասվող ծախսերի միջև: Պաշտպանության, հասարակական կարգի պահպանության և առողջապահության ոլորտներում դիտարկվող տարիներին ընդհանրապես ծախսեր չեն կատարվել: Իսկ մյուս ոլորտներում կատարվող ծախսերն ունեն զուտ էպիզոդիկ դրսևորումներ (տես աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Վայոց Ձորի մարզի համայնքների բյուջեների ծախսերն ըստ ոլորտների

| Հ/Հ | Ծախսերն ըստ ոլորտների | Տարիներ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **2006 թ.** | | **2007 թ.** | | **2008 թ.** | |
| | | **Գումար (հազ. դր.)** | **Տես. կշիռ (%)** | **Գումար (հազ. դր.)** | **Տես. կշիռ (%)** | **Գումար (հազ. դր.)** | **Տես. կշիռ (%)** |
| | Ընդամենը ծախսեր | *958,231.5* | *100.0* | *2,564,508.3* | *100.0* | *1,178,248.8* | *100.0* |
| 1 | Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ | 438,768.1 | 45.7 | 624,170.8 | 24.3 | 598,808.0 | 50.8 |
| 2 | Պաշտպանություն | - | - | - | - | - | - |
| 3 | Հասարակական կարգի պահպանություն | - | - | - | - | - | - |
| 4 | Կրթություն և գիտություն | 87,961.9 | 9.2 | 135,314.3 | 5.3 | 117,199.1 | 9.9 |
| 5 | Առողջապահություն | - | - | - | - | - | - |
| 6 | Սոցիալական ապահովագրություն և սոցաիալական ապահովություն | - | - | - | - | 3,672.5 | 0.3 |
| 7 | Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն | 74,981.0 | 7.8 | 92,783.7 | 3.6 | 118,284.3 | 10.0 |
| 8 | Բնակարանային կոմունալ տնտեսություն | 192,686.5 | 20.1 | 253,068.3 | 9.9 | 269,826.0 | 22.9 |
| 9 | Վառելիքային և էներգետիկ համալիր | 105,187.0 | 11.0 | 17,228.1 | 0.7 | 1,001.3 | 0.1 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն | - | - | 288.0 | 0.01 | - | - |
| 11 | Արդյունաբերություն, հանքային հանածոներ, շինարարություն և բնապահպանություն | - | - | - | - | 3,000.0 | 0.3 |
| 12 | Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ | 1,498.5 | 0.2 | 103,037.7 | 4.0 | 27,691.7 | 2.4 |
| 13 | Տնտեսական այլ ծառայություն-ներ | - | - | 1,300,000.0 | 50.7 | - | - |
| 14 | Հիմնական խմբին չդասվող ծախսեր | 57,148.4 | 6.0 | 38,617.6 | 1.5 | 38,765.9 | 3.3 |

Չանտեսելով այն հանգամանքը, որ տարբեր ոլորտներում ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների թիվը խիստ տարբեր է, ինչպես նաև տարբեր է կոնկրետ լիազորությունների իրականացման ծախսատարությունը, այդուհանդերձ, կառավարման ապարատի վրա կատարվող ծախսերի վերը նշված ցուցանիշի հիման վրա կարելի է փաստել, որ մարզում համայնքների կողմից մատուցվող ծառայությունների մակարդակը գտնվում է ցածր մակարդակի վրա:

Մարզում համայնքների կողմից ծառայությունների մատուցման մակարդակի ցածր լինելն ավելի է ընդգծվում առանձին համայնքների բյուջեների ծախսերը դիտարկելիս:

Համայնքների կողմից կատարվող ծախսերը ներկայացվում են գործառնական դասակարգման 14 ոլորտներում: Ընդ որում, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների բաժնում ներկայացվող ծախսերը հիմնականում իրենցից ներկայացնում են վարչական բնույթի ծախսեր (օրինակ, կառավարման ապարատի պահպանման ծախսեր, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ և այլն) և շատ դեպքերում կապված են օրենքով իրենց վերապահված հանրային ծառայությունների մատուցման կազմակերպման, կառավարման և մի շարք այլ հարցերի հետ: Հիմնական խմբին չդասվող ծախսերի հիմնական մասն իրենցից ներկայացնում են պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերը, նախորդ բյուջետային տարվանից անցած բյուջետային պարտքերի մարման նպատակով նախատեսվող հատկացումները և համայնքների պահուստային ֆոնդը: Ասվածը նշանակում է, որ կոնկրետ ծառայությունների մատուցման մասին պատկերացում ստանալու համար հարկ է դիտարկել ծախսերի գործառնական դասակարգման մյուս 12 ոլորտները: Իհարկե պետք է նշել, որ 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքով ՏԻՄ-երին վերապահված որոշ լիազորություններ կարող են իրականացվել համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից: Այդպիսի լիազորություններից են, օրինակ, 'համայնքի ղեկավարը հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը' (հոդված 41, մաս 3, կետ 3) և այլն: Այս դեպքում նման լիազորությունների իրականացման ծախսերը ներառվում են կառավարման ապարատի պահպանման ծախսերի մեջ և դրանք հնարավոր չէ ֆինանսական առումով առանձնացնել ապարատի ծախսերից:

Եվ այսպես, մարզի գյուղական համայնքների 2008 թ. բյուջեների ծախսերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների

հետ կապված և հիմնական խմբին չդասվող ծախսերից բացի գյուղական համայնքները ծախսեր են կատարել առավելագույնը 4 ոլորտներում (տես աղյուսակ 4), ընդ որում՝

- **1 համայնք** ոչ մի այլ ոլորտում ծախսեր **չի կատարել**
- **20 համայնք** ծախսեր են կատարել ընդամենը **1 ոլորտում**
- **7 համայնք** ծախսեր են կատարել ընդամենը **2 ոլորտներում**
- **9 համայնք** ծախսեր են կատարել ընդամենը **3 ոլորտներում**
- **4 համայնք** ծախսեր են կատարել ընդամենը **4 ոլորտներում**

*Աղյուսակ 4. Վայոց Ձորի մարզի գյուղական համայնքներն ըստ 2008 թ. կատարված ծախսերի ոլորտների թվի*

**Ծանոթություն: Փակագծերում ներկայացված են համապատասխան ոլորտների հանրագումարային ծախսերի տեսակարար կշիռները ընդհանուր ծախսերի մեջ: Այսինքն, եթե օրինակ համայնքը ծախսեր է կատարել թվով 4 ոլորտներում, ապա փակագծում նշված թիվն իրենից ներկայացնում է այդ բոլոր 4 ոլորտների ծախսերի ընդհանուր գումարի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերի մեջ:**

| Համայնքի անվանում | Ոլորտների անվանում |
|---|---|
| **0 ոլորտ** | |
| Գողթանիկ | - |
| **1 ոլորտ** | |
| Ազատեկ (6.2 %), Աղնջաձոր (12.2 %), Արտավան (5,3 %), Բարձրունի (11.3 %), Գնիշիկ (18.5 %), Գոմք (10.5 %), Ջեդեա (18.2 %), Թառաթումբ (18.0 %), Խնձորուտ (13.9 %), Կարմրաշեն (9.4 %), Հերմոն (16.7 %), Հորբատեղ (12.6 %), Հորս (12.5 %), Նոր Ազնաբերդ (14.8 %), Սալլի (23.1 %), Սարավան (22.9 %), Սերս (12.5 %), Վարդահովիտ (4.5 %), Փոռ (4.1 %), Քարագլուխ (8.6 %) | ✓ մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն |
| **2 ոլորտ** | |
| Եղեգիս (39.3 %), Հերհեր (16.8 %) | ✓ կրթություն և գիտություն<br>✓ մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն |
| Արտաբույնք (33.2 %) | ✓ մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն<br>✓ արդյունաբերություն, հանքային հանածոներ, շինարարություն և բնապահպանություն |
| Ելփին (16.1 %), Խաչիկ (15.2 %), Մարտիրոս (82.2 %), Չիվա (12.7 %) | ✓ մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն<br>✓ բնակարանային կոմունալ տնտեսություն |
| **3 ոլորտ** | |
| Ագարակաձոր (40.7 %), Արփի (25.7 %), Ջառիթափ (20.5 %), Մալիշկա (58.0 %), Ռինդ | ✓ կրթություն և գիտություն<br>✓ մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն<br>✓ բնակարանային կոմունալ տնտեսություն |

| | |
|---|---|
| (18.9 %) | |
| Արենի (33.6 %), Շատին (17.7 %) | ✓ սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն<br>✓ մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն<br>✓ բնակարանային կոմունալ տնտեսություն |
| Արին (41.3 %) | ✓ մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն<br>✓ բնակարանային կոմունալ տնտեսություն<br>✓ տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ |
| Գնդեվազ (89.9 %) | ✓ կրթություն և գիտություն<br>✓ սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն<br>✓ բնակարանային կոմունալ տնտեսություն |
| **4 ոլորտ** | |
| Աղավնաձոր (78.7 %), Գլաձոր (27.6 %) | ✓ կրթություն և գիտություն<br>✓ սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն<br>✓ մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն<br>✓ բնակարանային կոմունալ տնտեսություն |
| Գետափ (33.7 %) | ✓ կրթություն և գիտություն<br>✓ մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն<br>✓ բնակարանային կոմունալ տնտեսություն<br>✓ տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ |
| Վերնաշեն (43.4 %) | ✓ կրթություն և գիտություն<br>✓ մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն<br>✓ բնակարանային կոմունալ տնտեսություն<br>✓ վառելիքային և էներգետիկ համալիր |

Վերոնշյալ տվյալներից ուղղակիորն պարզ է դառնում, որ մարզի գյուղական համայնքները լավագույն դեպքում իրականացնում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորությունների (որոնցից պարտադիր լիազորությունների թիվը 50 է) աննշան մասը՝ համայնքի բյուջեն ծախսելով ընդամենը մեկ կամ մի քանի հանրային ծառայությունների մատուցման նպատակով, իսկ երբեմն նույնիսկ ընդամենը մի քանի հոգուց բաղկացած կառավարման ապարատի պահպանման նպատակով:

Իսկ եթե հաշվի առնենք նաև, որ տարբեր ոլորտներում կատարվող ծախսերը երբեմն չեն գերազանցում նույնիսկ 200 կամ 300 հազ. դրամը, ապա կարելի է պատկերացում կազմել նաև մատուցվող ծառայությունների ծավալի և որակի վերաբերյալ:

Գրեթե նմանատիպ պատկեր է ստացվում նաև մարզի 2006, 2007, 2009, 2010 թթ. բյուջեները դիտարկելիս:

Քաղաքային համայնքներում նույնպես զգալի տեսակարար կշիռ են կազմում ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների ծախսերը: Այսպես, եթե Եղեգնաձոր և Վայք քաղաքներում այդ ծախսերի տեսակարար կշիռները ընդհանուր ծախսերի մեջ 2006, 2007 և 2008 թթ. տատանվել են 20 %-ից 50 %-ի սահմաններում, ապա Ջերմուկ քաղաքում

այդ ցուցանիշը հասնում է ինչև նույնիսկ 70 %-ի: Իսկ մնացյալ միջոցները հիմնականում բաշխվում են հանրային ծառայությունների մատուցումն արտացոլող 4՝ կրթության և գիտության, մշակույթի, տեղեկատվության , սպորտի և կրոնի, բնակարանային կոմունալ տնտեսության, ինչպես նաև տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի ոլորտների միջև: Բացի այդ, քանի որ Ջերմուկը համարվում է հանրապետության հայտնի առողջարանային քաղաքներից մեկն ու զբոսաշրջության կենտրոն, ապա Ջերմուկ քաղաքի բյուջեի ծախսերի շարքում կարելի է հանդիպել զբոսաշրջության հետ կապված զգալի ծախսերի: Օրինակ, 2007 թ. Ջերմուկ համայնքի բյուջեի ծախսերի 79.6 %-ը կատարվել է տնտեսական այլ ծառայությունների ոլորտում, որտեղ ներկայացվում են զբոսաշրջիկության բնագավառում գործունեության կազմակերպման, զբոսաշրջիկներին հրապուրելու հիմնական նպատակ ունեցող տոնակատարությունների և տոնախմբությունների անցկացմանը ֆինանսական աջակցման գծով ծախսերը և այլն (տես աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Վայոց Ձորի մարզի քաղաքային համայնքների բյուջեների ծախսերի ոլորտային բաշխվածությունը տոկոսային արտահայտությամբ (%)

| **Ոլորտներ** | **Եղեգնաձոր** | | | **Ջերմուկ** | | | **Վայք** | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2006 | 2007 | 2008 | 2006 | 2007 | 2008 | 2006 | 2007 | 2008 |
| 1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ | **48.1** | **21.3** | **30.2** | **70.1** | **17.6** | **67.0** | **34.3** | **34.8** | **32.7** |
| 2. Հիմնական խմբին չդասվող ծախսեր | **2.9** | **1.3** | **2.9** | **3.4** | **0.8** | **3.6** | **3.5** | **9.1** | **4.1** |
| 3. Հանրային ծառայությունների մատուցումն արտացոլող ոլորտներ, | **49.0** | **77.4** | **66.9** | **26.5** | **81.6** | **29.4** | **62.2** | **56.1** | **63.2** |
| որից՝ | *24.5* | *14.1* | *32.9* | *5.3* | *0.1* | *1.8* | *25.3* | *24.3* | *30.8* |
| - Կրթություն և գիտություն | - | - | - | - | - | *0.2* | - | - | - |
| - Սոցիալական ապահովագրություն և սոցաիալական ապահովություն | *5.7* | *3.2* | *9.4* | *15.9* | *1.9* | *13.9* | *23.0* | *17.7* | *23.5* |
| - Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն | *18.8* | *9.8* | *24.6* | *5.3* | - | *5.3* | *11.6* | *9.3* | *8.9* |
| - Բնակարանային կոմունալ տնտեսություն | - | *50.3* | - | - | - | *8.2* | *2.3* | *4.8* | - |
| - Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ | | - | - | | *79.6* | - | | - | - |

## Վայոց Ձորի մարզի համայնքների նոր ցանկը՝ առաջարկվող խոշորացումից հետո

Առաջարկվում է Վայոց Ձորի մարզի 44 համայնքների թիվը խոշորացման միջոցով հասցնել 7-ի հետևյալ ճանապարհով՝

1. ***Եղեգնաձոր*** համայնք՝ Ագարակաձորի, Գնիշիկի, Գետափի, Արփիի, Աղավնաձորի, Գլաձորի և Վերնաշենի ընդգրկմամբ
2. ***Ջերմուկ*** համայնք՝ Գնդեվազի ընդգրկմամբ
3. ***Վայք*** համայնք՝ Արինի, Ազատեկի, Արտավանի, Սարավանի, Փոռի, Հերիերի, Կարմրաշենի և Զեդեայի ընդգրկմամբ
4. ***Մալիշկա*** համայնք
5. ***Զառիթափ*** համայնք՝ Բարձրունու, Գոմքի, Խնձորուտի, Մարտիրոսի, Նոր Ազնաբերդի և Սերսի ընդգրկմամբ
6. ***Շատին*** համայնք՝ Աղնջաձորի, Արտաբույնքի, Գողթանիկի, Եղեգիսի, Թառաթումբի, Հերմոնի, Հորբատեղի, Հորսի, Սալլիի, Վարդահովիտի և Քարագլուխի ընդգրկմամբ
7. ***Արենի*** համայնք՝ Խաչիկի, Ելփինի, Չիվայի և Ռինդի ընդգրկմամբ

## Վայոց Ձորի մարզում համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետության հաշվարկման մոտեցումները

Համայնքների խոշորացման արդյունքում առաջանում են որոշակի տնտեսական օգուտներ, ձևավորվում են ազատ միջոցներ, որոնք հնարավոր է ուղղել բնակչությանը նոր ծառայությունների մատուցմանը և մատուցվող ծառայությունների քանակի և որակի բարձրացմանը:

Համայնքների խոշորացման տնտեսական օգուտներն առաջին հերթին արտահայտվում են վարչական ծախսերի կրճատմամբ ի հաշիվ համայնքի ղեկավարի աշխատակազմի և ընտրովի պաշտոնների թվի կրճատման: Ակնհայտ է, որ համայնքների խոշորացման արդյունքում նոր ձևավորվող համայնքում չեն կարող լինել, օրինակ, թվով 12 համայնքի ղեկավարներ կամ 12 աշխատակազմի քարտուղարներ: Ուստի,

անհրաժեշտություն է առաջանում վերանայել նոր ձևավորվող համայնքի հաստիքացուցակն ու կրճատել «ավելորդ» հաստիքները:

Պետք է նշել, որ գործնականում բավականին դժվար է հաշվարկել, թե կոնկրետ քանի միավոր հաստիք կկրճատվի և որքան գումար կազատվի համայնքների խոշորացման արդյունքում, քանի որ ներկայումս չկան համայնքի ղեկավարի աշխատակազմի թվի վերաբերյալ սահմանված նորմատիվներ: Իհարկե, կան պաշտոններ, օրինակ, համայնքի ղեկավարի կամ աշխատակազմի քարտուղարի պաշտոնները, որոնց մասին միանշանակ կարելի է ասել, որ նոր ձևավորված մեկ համայնքում դրանք չեն կարող լինել մի քանի հատ: Սակայն, երբ խոսքը գնում է կոնկրետ մասնագետների մասին, շատ դժվար է ենթադրել, թե նրանցից քանիսը կկրճատվեն, ավելին, նոր ձևավորված համայնքում աշխատակազմի կրճատման արդյունքում տնտեսված գումարների հաշվին նոր ծառայությունների մատուցումը կարող է ենթադրել նոր աշխատողների ներգրավում:

Ուստի, Վայոց Ձորի մարզում համայնքների խոշորացման արդյունքում վարչական ապարատի պահպանման ծախսերի կրճատման հաշվարկը կատարվում է միմիայն փորձագիտական գնահատմամբ՝ հենվելով ծախսերի ***նվազագույն կրճատման*** գաղափարի վրա: Այսինքն՝ հաշվարկը կատարելիս դիտարկվել են այն պաշտոնները, որոնք փորձագիտական կարծիքով միանշանակ ենթակա են կրճատման: Ստացվում է, որ հաշվարկների արդյունքում կպարզվի, որ ազատվելու է ***առնվազն*** մի իքս թվով գումար, իրականում գիտակցելով, որ այդ գումարը կարող է լինել ավելին:

Հաշվարկները կատարելիս հաշվի են առնվել նաև խոշորացման արդյունքում նոր պաշտոնների առաջացման անհրաժեշտությունը: Խոսքը, մասնավորապես, վերաբերվում է նոր ձևավորված համայնքի բնակավայրերում (բացի համայնքի կենտրոնի բնակավայրից) «վարչական ներկայացուցչի» պաշտոնին, ով կհանդիսանա նախկին համայնքի տարածքում նոր ստեղծված համայնքի ղեկավարի ներկայացուցիչը: Իհարկե, «վարչական ներկայացուցչի» գործառույթներն էականորեն կտարբերվեն համայնքի ղեկավարի գործառույթներից, և բնականաբար, շատ մեծ ծախս չեն ենթադրի:

Փորձագիտական գնահատմամբ նոր ձևավորվող համայնքի վարչական ծախսերի նվազագույն կրճատման գումարները հաշվարկելու նպատակով կիրառվել են 2 տարբեր մոտեցումներ՝ կախված այն հանգամանքից, թե նոր ձևավորվող համայնքի կազմի մեջ մտնող համայնքներն ինչ կարգավիճակ ունեն (քաղաքային կամ գյուղական): Ստորև ներկայացված է այդ մոտեցումների մանրամասն նկարագիրը:

**Մոտեցում 1.** Այս մոտեցումը կիրառվել է այն դեպքերում, երբ նոր համայնքը ձևավորվել է միևնույն, այն է՝ գյուղական կարգավիճակ ունեցող համայնքների խոշորացման արդյունքում:

Համայնքների խոշորացման արդյուքնում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար նախ դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները: Այնուհետև այդ հաստիքացուցակների հաստիքային միավորների մեխանիկական գումարման միջոցով հաշվարկվել է, թե որքան միավոր հաստիք կունենար նոր ձևավորվող համայնքը, եթե չկատարվեին կրճատումներ և որքան գումար կպահանջվեր նրանց պահպանման համար:

Փորձագիտական գնահատմամբ առաջարկվել է խոշորացվող համայնքի նոր հաստիքացուցակը՝ ճշգրտելով մեխանիկական գումարման արդյունքում ձևավորված հաստիքացուցակը հետևյալ կերպ.

- Մինչև 1 միավոր կրճատվել են բոլոր այն հաստիքները, որոնք ենթադրում են վարչական բնույթի աշխատանք, օրինակ, համայքնի ղեկավարի հաստիքը:
- Չի զրոյացվել ոչ մի հաստիքային միավոր, այդպիսով պահպանելով, օրինակ, Շատին համայնքում գյուղատնտեսի հաստիքը:
- Քանի որ հստակ հայտնի չեն մասնագետների գործառույթները, ապա շատ դժվար է ասել, թե որ մասնագետները կկրճատվեն և քանի միավոր հաստիքի

անհրաժեշտություն կառաջանա: Այդ պատճառով յուրաքանչյուր համայնքում, ելնելով փորձագիտական դատողություններից, սահմանվել են մասնագետների տարբեր թվով հաստիքներ:

- Ենթադրվել է, որ խոշորացվող բոլոր նախկին համայնքների տարածքում կձևավորվի նոր՝ «վարչական ներկայացուցչի» պաշտոն (բացի համայնքի կենտրոնի բնակավայրից):

Ինչ վերաբերվում է նոր ձևավորված համայնքի աշխատակիցների աշխատավարձին, ապա փորձագիտական գնահատմամբ դրանք սահմանվել են՝ հիմք ընդունելով գործող համայնքներում համապատասխան հաստիքային միավորի դրույքաչափերից ամենաբարձրը՝ ավելացնելով 20 %-ով: Այս տրամաբանությունն առաջ է եկել այն գաղափարից, որ նոր ձևավորված համայնքն ավելի մեծ է, քան նախկինները և հետևաբար աշախատանքն ավելի ծանրաբեռնված է:

Հաշվարկների կատարման ժամանակ երբեմն անհրաժեշտություն է առաջացել որոշակիորեն շեղվել նշված մոտեցումներից՝ ելնելով նպատակահարմարությունից: Օրինակ, Շատին համայնքում առաջատար մասնագետի աշխատավարձը սահմանվել է՝ հիմք ընդունելով գործող համայնքներում այդ հաստիքի դրույքաչափերի միջին կշռված արժեքը՝ ավելացնելով 20 %-ով և այլն: Այդ ճշգրտումները, եթե այդպիսիք կան, ներկայացված են կոնկրետ համայնքի խոշորացման տնտեսական արդյունավետության հաշվարկների մեջ:

Հաշվարկների կատարման ժամանակ ենթադրվել է, որ խոշորացվող համայնքում նոր ձևավորվող «վարչական ներկայացուցչի» պաշտոնը կլինի վճարովի և վճարի չափը կարող է տատանվել՝ կախված նախկին համայնքի բնակչության թվից: Հաշվարկների կատարման նպատակով վերցվել է միջինացված թիվ, այն է՝ 50.0 հազ. դրամ:

**Մոտեցում 2.** Այս մոտեցումը կիրառվել է այն դեպքերում, երբ նոր համայնքը ձևավորվել է տարբեր, այն է՝ թե գյուղական և թե քաղաքային կարգավիճակ ունեցող համայնքների խոշորացման արդյունքում:

Այսպես, ենթադրվել է, որ քաղաքային համայնքի գործող վարչական ապարատի պահպանման հետ կապված ծախսերի հաշվին հնարավոր կլինի սպասարկել խոշորացված համայնքն ամբողջությամբ: Ասվածը նշանակում է, որ նախ, խոշորացման արդյունքում անհրաժեշտություն չի առաջանա ձևավորել նոր հաստիքներ (բացառությամբ վարչական ներկայացուցչի պաշտոնի) և կտնտեսվեն խոշորացվող գյուղական համայնքների աշխատակազմերին աշխատավարձի վճարման և սոցապ հատկացումների գծով ծախսերն ամբողջությամբ: Փաստորեն, այս դեպքում նոր ձևավորված համայնքի առաջարկվող հաստիքացուցակն ըստ էության իրենից ներկայացնում է խոշորացվող համայնքների կազմի մեջ մտնող քաղաքային համայնքի հաստիքացուցակը: Բացի այդ, կտնտեսվեն նաև խոշորացվող գյուղական համայնքների մյուս վարչական ծախսերը, ինչպիսիք են, օրինակ, վարչական շենքի պահպանման ծախսերը և այլն: Այսինքն՝ նշյալ համայնքների խոշորացման արդյունքում կտնտեսվեն քաղաքային համայնքին միացվող բոլոր գյուղական համայնքների վարչական ծախսերն ամբողջությամբ:

Այս մոտեցման դեպքում նույնպես խոշորացվող համայնքում նոր ձևավորվող «վարչական ներկայացուցչի» պաշտոնի վճարի չափը սահմանվել է միջինացված թիվ, այն է՝ 50.0 հազ. դրամ:

Նկարագրված մոտեցմամբ համայնքների խոշորացման արդյունքում նվազագույն տնտեսվող գումարը հաշվարկվել է հետևյալ բանաձևի միջոցով՝

**ՆՏԳ = ՎԾ – ՎՆԾ**

*Որտեղ՝*
*ՆՏԳ-ն նվազագույն տնտեսվող գումարն է*

*ՎԾ-ն փվյալ քաղաքային համայնքին միացվող բոլոր գյուղական համայնքների բյուջեների վարչական ծախսերի հանրագումարն է*
*ՎՆԾ-ն խոշորացվող նախկին գյուղական համայնքներում վարչական ներկայացուցիչների պահպանման (աշխատավարձ և սոցապ. հատկացումներ) հետ կապված ծախսերն են*

Հարկ է նշել, որ համայնքների խոշորացման արդյունքում միայն աշխատավարձի գծով ծախսը չէ, որ կարող է տնտեսվել: Միանշանակ կարելի է ասել, որ զգալի տնտեսումներ կլինեն նաև նախկին համայնքների վարչական շենքերի պահպանման ծախսերի գծով, քանի որ խոշորացման արդյունքում անհրաժեշտություն կառաջան պահպանել ընդամենը մեկ վարչական շենք: Բացի այդ, հնարավոր է, որ տնտեսումներ լինեն նաև գործող հիմնարկների պահպանման գծով: Համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետության հաշվարկի ժամանակ դիտարկվել են, թե նոր ձևավորվող համայնքում ինչ գործող հիմնարկներ կան և տրվել փորձագիտական գնահատականներ, թե որ հիմնարկների թիվն է հնարավոր կրճատել՝ դրանով հանգեցնելով որոշակի տնտեսումների:

Հարկ է նշել, որ համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետությունն արտահայտվում է ոչ միայն համայնքային մակարդակում, այլ նաև պետական մակարդակում: Քանի որ խոշորացվող համայնքներում կան, օրինակ, դպրոցներ, որոնց պահպանման ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեից: Մարզի գրեթե բոլոր համայնքներում կան հանրակրթական դպրոցներ: Սակայն նրանցից մեծ մասում մատուցվող ծառայությունները գտնվում են ցածր մակարդակի վրա (չկան նորմալ շենքային պայմաններ, աշակերտների թիվն է խիստ սահմանափակ, չկա հնարավորություն անհրաժեշտ մանկավարժական անձնակազմ պահելու համար, ինչի արդյունքում նույն մանկավարժը կարող է դասավանդել մի քանի տարբեր առարկաներ և այլն): Համայնքների խոշորացման արդյունքում հնարավոր կլինի համայնքի բնակավայրերում կրճատել դպրոցների թիվը և ձեռք բերել, օրինակ, տրանսպորտային միջոց, որը հասանելի կդարձնի տվյալ ծառայությունը այն համայնքների բնակիչների համար, որտեղ կրճատվել են դպրոցները, իսկ կրճատման արդյունքում տնտեսված գումարներն ուղղել գործող դպրոցի շենքի վերանորոգմանը, բարձր որակավորում ունեցող մանկավարժական կադրերի ներգրավմանը, գրքային ֆոնդի ստեղծմանը և այլն: Այս ամենը հնարավորություն կտա ապահովել որակյալ կրթություն: Փաստորեն, համայնքների խոշորացման արդյունքում տնտեսական օգուտների ստացումը կարևոր է ոչ միայն նոր ծառայությունների մատուցման, այլ նաև մատուցվող ծառայությունների որակի բարձրացման տեսանկյունից թե համայնքային և թե պետական մակարդակում:

Խոշորացման արդյունքում գումարների տնտեսման էֆեկտն ավելի ակնառու դարձնելու նպատակով այդ գումարները համադրվել են խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ:

Համայնքներում ծառայությունների մատուցման մակարդակի մասին կարելի է որոշակի պատկերացում կազմել տարբեր ցուցանիշների միջոցով, ինչպիսիք են, օրինակ, բնակչության մեկ շնչին ընկնող վարչական (աշխատակազմի պահպանման) ծախսերի և համայնքի բյուջեի ծախսերի կազմում վարչական (աշխատակազմի պահպանման) ծախսերի տեսակարար կշիռն արտահայտող ցուցանիշները: Տրամաբանությունը հուշում է, որ նույն եկամուտների պայմաններում որքան այդ ցածր են այդ ցուցանիշները, այնքան շատ գումարներ են ազատվում, որոնք կարող են ուղղվել համայնքային ծառայությունների մատուցմանը կամ կապիտալ բյուջե: Ելնելով ծախսերի նվազագույն կրճատման գնահատականից, հաշվարկվել են, թե այս երկու ցուցանիշները ինչպիսի փոփոխություն կկրեն Վայոց Ձորի մարզում համայնքների խոշորցման արդյունքում:

# Վայոց Ձորի մարզում համայնքների խոշորացման տնտեսական օգուտները

### 1. *Եղեգնաձոր համայնք*

Եղեգնաձոր համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ Եղեգնաձոր, Ագարակաձոր, Գնիշիկ, Գետափ, Արփի, Աղավնաձոր, Գլաձոր և Վերնաշեն *(ընդամենը 8 համայնք)*:

Նոր ձևավորված համայնքը կազմված կլինի ինը բնակավայրից և կունենա 19513 բնակիչ:

Նշյալ համայնքների խոշորացման արդյուքնում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է 2-րդ մոտեցումը:

Խոշորացվող համայնքներում 2010 թ. հունվարի 1-ի դրությամբ առկա են 81.8 միավոր հաստիքներ, որից.

- Եղեգնաձոր համայնքում՝ 19 միավոր
- Ագարակաձոր համայնքում՝ 7 միավոր
- Գնիշիկ համայնքում՝ 5 միավոր
- Գետափ համայնքում՝ 10.8 միավոր
- Արփի համայնքում՝ 9 միավոր
- Աղավնաձոր համայնքում՝ 12 միավոր
- Գլաձոր համայնքում՝ 11 միավոր
- Վերնաշեն համայնքում՝ 8 միավոր

Փաստորեն, վերևում նկարագրված 2-րդ մոտեցումը կիրառելու դեպքում կարելի է ասել, որ խոշորացման արդյունքում կկրճատվեն 55.8 միավոր հաստիքներ և առկա կլինեն ընդհանուր թվով 26 միավոր հաստիքներ, որոնցից 19-ը Վայք քաղաքային համայնքում առկա բոլոր հաստիքներն են, իսկ 7-ը խոշորացվող նախկին համայնքներում նոր ձևավորվող վարչական ներկայացուցիչների հաստիքները:

Նկարագրված մոտեցմամբ հաշվարկները կատարելու դեպքում համայնքների խոշորացման արդյունքում նվազագույն տնտեսվող գումարը կկազմի՝

**ՆՏԳ = ՎԾ – ՎՆԾ = 89,539.1 հազ. դրամ – 7* 738.0 հազ. դրամ = 84,373.1 հազ. դրամ**

*Որտեղ՝ ՎԾ-ն Եղեգնաձոր քաղաքային համայնքին միացվող Ագարակաձոր, Գնիշիկ, Գետափ, Արփի, Աղավնաձոր, Գլաձոր և Վերնաշեն գյուղական համայնքների 2009 թ. բյուջեների վարչական ծախսերի հանրագումարն է*

*ՎՆԾ-ն խոշորացվող նախկին գյուղական համայնքներում վարչական ներկայացուցիչների պահպանման (աշխատավարձ և սոցապ. հատկացումներ) հետ կապված ծախսերն են՝*

Տարեկան աշխատավարձ = 12*50.0 = 600.0 հազ. դրամ

Տարեկան սոցապ. հատկացումներ = 12*(7.0 + (50.0-20.0)*15%) = 138.0 հազ. դրամ

Խոշորացման արդյունքում որոշակի տնտեսումներ կարող են առաջանալ նաև նախկին համայնքների գործող հիմնարկների պահպանման ծախսերի գծով: Խոշորացվող համայնքներում գործում են հետևյալ հիմնարկները .

- Եղեգնաձոր՝ 3 դպրոց, 3 մանկապարտեզ, երաժշտական դպրոց, երկրագիտական թանգարան, գրադարան, մարզադաշտ, արվեստի դպրոց, մշակույթի տուն, հիվանդանոց, պոլիկլինիկա
- Ագարակաձոր՝ դպրոց, մանկապարտեզ, բուժկետ
- Գնիշիկ՝ դպրոց, բուժկետ
- Գետափ՝ դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, գրադարան
- Արփի՝ դպրոց, բուժկետ, գրադարան
- Աղավնաձոր՝ դպրոց, մանկապարտեզ, բուժկետ
- Գլաձոր՝ դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, գրադարան
- Վերնաշեն՝ դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, գրադարան, թանգարան

Փաստորեն, նշյալ համայնքների խոշորացման արդյունքում նոր ձևավորված համայնքում գործելու են՝ 7 բուժկետ, 10 դպրոց, 5 գրադարան, 8 մանկապարտեզ, 2 թանգարան, 1 երաժշտական դպրոց, 1 մարզադաշտ, 1 արվեստի դպրոց, 1 մշակույթի տուն, 1 հիվանդանոց և 1 պոլիկլինիկա: Կարելի է ենթադրել, որ կկրճատվի, օրինակ, գրադարանների, թանգարանների կամ մանկապարտեզների թիվը, ինչը դարձյալ կհանգեցնի որոշակի տնտեսումների:

Ասվածը նշանակում է, որ հաշվարկված **84,373.1** հազ. դրամը այն **նվազագույն գումարն** է, որը կտնտեսվի դիտարկվող համայնքների խոշորացման արդյունքում: Եվ մյուս տնտեսումներն էլ հաշվի առնելու դեպքում այն կարող է որոշակիորեն աճել:

Նշյալ տնտեսվող գումարը գրեթե հավասար է խոշորացվող 7 գյուղական համայնքներից 5-ի՝ Ագարակաձոր, Գնիշիկ, Գետափ, Արփի, Վերնաշեն համայնքների բյուջեների ծախսերի հանրագումարին ( տես աղյուսակ 5):

| Հ/Հ | Համայնք | Ընդամենը Ծախսեր | Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ | | Տնտեսական հարաբերություններ | Շրջակա միջավայրի պաշտպանություն | Բնակ. շին. և կոմուն. տնտեսություն | Հանգիստ, մշակույթ և կրոն | Կրթություն | Սոցիալական պաշտպանություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Վարչական բյուջե | Ֆոնդային բյուջե | | | | | | |
| 1 | Եղեգնաձոր | 117,530.4 | 23,140.8 | 1,289.6 | 12,827.0 | 27,586.5 | 580.8 | 762.0 | 50,412.7 | 931.0 |
| 2 | Ագարակաձոր | 12,137.9 | 9,237.8 | - | 660.0 | - | - | 1,483.1 | 457.0 | 300.0 |
| 3 | Գնիշիկ | 4,717.9 | 3,300.7 | - | 729.6 | - | - | 687.6 | | |
| 4 | Գետափ | 26,236.8 | 14,775.9 | 152.0 | 4,911.6 | - | 845.3 | 3,207.6 | 1,324.4 | 1,020.0 |
| 5 | Արփի | 21,801.5 | 11,531.0 | 4,300.0 | 660.0 | - | 272.0 | 1,154.0 | 3,444.5 | 440.0 |
| 6 | Աղավնաձոր | 102,748.4 | 16,267.9 | 340.0 | 3,463.0 | - | 71021.5 | 916.8 | 10,639.2 | 100.0 |
| 7 | Գլաձոր | 33,311.2 | 18,984.3 | 130.0 | 690.0 | - | 516.0 | 3,300. | 8,445.9 | 1,245.0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | Վերնաշեն | 18,595.6 | 9,825.5 | 694.0 | 1,135.0 | 250.0 | 40.0 | 2,078.3 | 4,272.8 | 300.0 |

*Աղյուսակ 5. Խոշորացվող համայնքների 2009 թ. բյուջեների փաստացի ծախսերը գործառնական դասակարգմամբ (հազ. դրամ)*

Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (84,373.1 հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը (քանի որ ակնկալվում են նաև այլ տնտեսումներ) 1511.2 դրամ: Աղյուսակ 7-ի տվյալներից պարզ է դառնում, որ այսպիսի ցուցանիշ չի գրանցվել խոշորացվող և ոչ մի համայնքում: Ավելին, այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից բազմապատիկ անգամներով, օրինակ, Գնիշիկ համայնքից` 10 անգամ, Արփի համայնքից` 8.6 անգամ, ամենափոքր ցուցանիշն ունեցող Եղեգնաձոր համայնքից` 2 անգամ և այլն:

Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (84,373.1 հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում վարչական ծախսերի բաժինն ընդհանուր ծախսերի մեջ կկազմի առավելագույնը (քանի որ ակնկալվում են նաև այլ տնտեսումներ) 8.8 %: Այս ցուցանիշը փոքր է 8.3 անգամ Արփի համայնքի (ամենաբարձր ցուցանիշ ունեցող) և 1.8 անգամ Աղավնաձոր համայնքի (ամենացածր ցուցանիշ ունեցող) համապատասխան ցուցանիշներից (տես աղյուսակ 7):

| ՀՀ | **Համայնք** | **Բնակչություն** | **Մեկ շնչին ընկնող վարչական ծախսեր** | **Վարչական ծախսերն ընդհանուր ծախսերի կազմում** |
|---|---|---|---|---|
| 1 | Եղեգնաձոր | 8187 մարդ | 2984. մարդ | 20.8 % |
| 2 | Ագարակաձոր | 1431 մարդ | 6455.5 մարդ | 76.1 % |
| 3 | Գնիշիկ | 218 մարդ | 15140.8 մարդ | 70.0 % |
| 4 | Գետափ | 2363 մարդ | 6317.4 մարդ | 56.9 % |
| 5 | Արփի | 1224 մարդ | 12933.8 մարդ | 72.6 % |
| 6 | Աղավնաձոր | 2089 մարդ | 7950.2 մարդ | 16.2 % |
| 7 | Գլաձոր | 2682 մարդ | 7126.9 մարդ | 57.4 % |
| 8 | Վերնաշեն | 1319 մարդ | 7975.4 մարդ | 56.6 % |

*Աղյուսակ 7. Խոշորացվող համայնքների վարչական ծախսերի որոշ բնութագրիչներ*

## 2. Ջերմուկ համայնք

Ջերմուկ համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով` Ջերմուկ և Գնդեվազ (ընդամենը 2 համայնք):

Նոր ձևավորված համայնքը կազմված կլինի երեք բնակավայրից և կունենա 8428 բնակիչ:

Նշյալ համայնքների խոշորացման արդյուքնում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է 2-րդ մոտեցումը:

Խոշորացվող համայնքներում 2010 թ. հունվարի 1-ի դրությամբ առկա են 29 միավոր հաստիքներ, որից.

- Ջերմուկ համայնքում՝ 23 միավոր
- Գնդեվազ համայնքում՝ 6 միավոր

Փաստորեն, վերևում նկարագրված 2-րդ մոտեցումը կիրառելու դեպքում կարելի է ասել, որ խոշորացման արդյունքում կկրճատվեն 5 միավոր հաստիքներ և առկա կլինեն ընդհանուր թվով 24 միավոր հաստիքներ, որոնցից 23-ը Ջերմուկ քաղաքային համայնքում առկա բոլոր հաստիքներն են, իսկ 1-ը խոշորացվող նախկին համայնքում նոր ձևավորվող վարչական ներկայացուցչի հաստիքը:

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ տնտեսվող 22108.4 հազ. դրամը նույնիսկ մի փոքր ավելին է, քան Սալլի, Հորբատեղ, Հերմոն, Գողթանիկ, Վարդահովիտ, Հորս համայնքների 2009 թ. բյուջեների ծախսերը միասին վերցված (նշյալ համայնքները ամենափոքր բյուջետային ծախսեր ունեցողներն են), կամ մի փոքր է զիջում Շատին (ամենամեծ) համայնքի ծախսերին և այլն (տես աղյուսակ 20):

Աղյուսակ 20. Խոշորացվող համայնքների 2009 թ. բյուջեների փաստացի ծախսերը գործառնական դասակարգմամբ (հազ. դրամ)

| **Հ/Հ** | **Համայնք** | **Ընդամենը Ծախսեր** | **Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ** | | | **Տնտեսական հարաբերություններ** | **Բնակ. շին. և կոմունալ տնտեսություն** | **Հանգիստ, մշակույթ և կրոն** | **Կրթություն** | **Սոցիալական պաշտպանություն** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը | Վարչական բյուջե | Ֆոնդային բյուջե | | | | | |
| 1 | Հորբատեղ | 3,246.8 | 2,166.4 | 2,166.4 | - | 660.0 | 25.0 | 395.4 | - | - |
| 2 | Գողթանիկ | 3,856.5 | 3,196.5 | 2,896.5 | 300.0 | 660.0 | - | - | - | - |
| 3 | Վարդահովիտ | 4,228.0 | 3,310.9 | 2990.9 | 320.0 | 701.1 | - | 216.0 | - | - |
| 4 | Շատին | 25,681.6 | 18,250.9 | 14,050.9 | 4,200.0 | 680.0 | 1,000.0 | 2,635.7 | 115.0 | 3,000.0 |
| 5 | Հերմոն | 3,281.2 | 3,231.2 | 2,909.2 | 322.0 | 15.0 | 35.0 | - | - | - |
| 6 | Եղեգիս | 5,349.0 | 5,040.6 | 5,040.6 | - | - | - | 308.4 | - | - |
| 7 | Սալլի | 2,149.2 | 1,641.4 | 1,641.4 | - | - | - | 507.8 | - | - |
| 8 | Աղնջաձոր | 7,208.2 | 5,608.3 | 5,189.8 | 418.5 | 660.0 | 48.0 | 891.9 | - | - |
| 9 | Հորս | 5,213.3 | 4,313.3 | 4,313.3 | - | 660.0 | - | 240.0 | - | - |
| 10 | Արտաբույնք | 13,429.0 | 10,422.4 | 10,422.4 | - | 660.0 | 30.0 | 2,166.6 | - | 150.0 |
| 11 | Թառաթումբ | 6,507.5 | 5,907.8 | 5,907.8 | - | - | 29.7 | 570.0 | - | - |
| 12 | Քարագլուխ | 11,830.3 | 10,116.9 | 9,561.9 | 555.0 | 660.0 | 40.0 | 1,013.4 | - | - |

Ինչպես արդեն նշվել է, տնտեսական արդյունավետության գնահատման տարածված ցուցանիշներից են բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերն ու վարչական ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի կազմում:

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 6539.4 դրամից մինչև 19119.5 դրամի սահմաններում, միջինը կազմելով 11330.7 (տես աղյուսակ 21): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (22108.4 հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը (քանի որ ակնկալվում են նաև այլ տնտեսումներ, օրինակ, վարչական շենքերի պահպանման հետ կապված ծախսերի գծով) 7112.8 դրամ: Նման ցուցանիշ, բացառությամբ Սալլի համայնքի, ոչ մի այլ համայնքում չի գրանցվել: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.1-ից մինչև 2.7 անգամ:

Աղյուսակ 21. Խոշորացվող համայնքների վարչական ծախսերի որոշ բնութագրիչներ

| ՀՀ | Համայնք | Բնակչություն | Մեկ շնչին ընկնող վարչական ծախսեր | Վարչական ծախսերն ընդհանուր ծախսերի կազմում |
|---|---|---|---|---|
| 1 | Հորբատեղ | 265 մարդ | 8,175.1 մարդ | 66.7 % |
| 2 | Գողթանիկ | 220 մարդ | 14,529.5 մարդ | 82.9 % |
| 3 | Վարդահովիտ | 235 մարդ | 14,088.9 մարդ | 78.3 % |
| 4 | Շատին | 2,035 մարդ | 8,968.5 մարդ | 71.1 % |
| 5 | Հերմոն | 169 մարդ | 19,119.5 մարդ | 98.5 % |
| 6 | Եղեգիս | 512 մարդ | 9,844.9 մարդ | 94.2 % |
| 7 | Սալլի | 251 մարդ | 6,539.4 մարդ | 76.4 % |
| 8 | Աղնջաձոր | 480 մարդ | 11,684.0 մարդ | 77.8 % |
| 9 | Հորս | 318 մարդ | 13,563.8 մարդ | 82.7 % |
| 10 | Արտաբույնք | 1,155 մարդ | 9,023.7 մարդ | 77.6 % |
| 11 | Թառաթումբ | 636 մարդ | 9,289.0 մարդ | 90.8 % |
| 12 | Քարագլուխ | 908 մարդ | 11,142.0 մարդ | 85.5 % |

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 66.7 %-ից մինչև 98.5 %-ի սահմաններում (տես աղյուսակ 21): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (22108.4 հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը (քանի որ ակնկալվում են նաև այլ տնտեսումներ) 55.6 %: Նման ցուցանիշ չի

գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.2-ից մինչև 1.8 անգամ:

## 6. Արենի համայնք

Արենի համայնքն առաջարկվում է ձևավորել հետևյալ համայնքների խոշորացման միջոցով՝ *Արենի, Խաչիկ, Ելփին, Չիվա, Ռինդ (ընդամենը 5 համայնք)*:

Նոր ձևավորվող համայնքը կազմված կլինի վեց բնակավայրից և կունենա 6805 բնակիչ:

Նշյալ համայնքների խոշորացման արդյունքում վարչական ծախսերի հնարավոր կրճատումները գնահատելու համար կիրառվել է 1-ին մոտեցումը, համաձայն որի դիտարկվել են խոշորացվող համայնքների հաստիքացուցակները (տես աղյուսակ 22):

Աղյուսակ 22. Արենի խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքների հաստիքացուցակները (01.01.2010 դրությամբ)

| **Անվանում** | **Արենի** | **Խաչիկ** | **Ելփին** | **Չիվա** | **Ռինդ** |
|---|---|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 1 | 1 | - | - |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Գլխավոր մասնագետ - ֆինանսիստ | 1 | - | 1 | - | 1 |
| Գլխավոր մասնագետ - ֆինանսիստ - հաշվապահ | - | 1 | - | - | - |
| Գլխավոր մասնագետ - հաշվապահ | 1 | - | 1 | - | 1 |
| Գլխավոր մասնագետ – մեթոդիստ | 1 | - | - | - | - |
| Ջրաբաշխ | - | 1 | - | - | - |
| Առաջատար մասնագետ | 1 | 1 | 2 | 2 | 2 |
| Համակարգչային օպերատոր | - | 1 | 1 | 1 | - |
| Մեքենագրուհի | 1 | - | - | - | - |
| Հավաքարար | - | - | 1 | 1 | - |
| Վարորդ | - | 1 | - | - | - |
| Պահակ | - | 1 | - | - | - |

| Ընդամենը | ***8*** | ***9*** | ***9*** | ***6*** | ***6*** |
|---|---|---|---|---|---|

Աղյուսակ 22-ի տվյալների մեխանիկական գումարումը ցույց է տալիս, որ մինչև խոշորացումը, Արենի խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքներում 2010թ.-ին կլինեին 38 միավոր հաստիքներ, որոնց պահպանման համար կպահանջվեր 44293.2 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով` 37320.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով` 6973.2 հազ. դրամ (տես աղյուսակ 23):

Աղյուսակ 23. Արենի խոշորացվող համայնքի կազմի մեջ մտնող նախկին համայնքների աշխատակիցների հանրագումարային թիվն ու նրանց պահպանման հետ կապված ծախսերը

| **Անվանում** | **Հաս-տիքային միավոր** | **Դրույք-չափ (հազ. դրամ)** | **Տարեկան ծախս (հազ. դրամ)** | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը | Աշխատա-վարձ | Սոցապ. հատկա-ցումներ |
| Համայնքի ղեկավար | 5 | 130.0-180.0 | 11298.0 | 9960.0 | 1338.0 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 3 | 80.0-120.0 | 4122.0 | 3480.0 | 642.0 |
| Աշխատակազմի քարտուղար | 5 | 78.0-125.0 | 6969.6 | 5880.0 | 1089.6 |
| Գլխավոր մասնագետ - ֆինանսիստ | 3 | 72.5-96.0 | 3573.6 | 2982.0 | 591.6 |
| Գլխավոր մասնագետ - ֆինանսիստ - հաշվապահ | 1 | 96.0 | 1372.8 | 1152.0 | 220.8 |
| Գլխավոր մասնագետ - հաշվապահ | 3 | 72.5-96.0 | 3573.6 | 2982.0 | 591.6 |
| Գլխավոր մասնագետ – մեթոդիստ | 1 | 80.0 | 1152.0 | 960.0 | 192.0 |
| Ջրաբաշխ | 1 | 40.0 | 600.0 | 480.0 | 120.0 |
| Առաջատար մասնագետ | 8 | 50.0-73.5 | 7036.8 | 5784.0 | 1252.8 |
| Համակարգչային օպերատոր | 3 | 35.0-45.0 | 1843.2 | 1476.0 | 367.2 |
| Մեքենագրուհի | 1 | 40.0 | 600.0 | 480.0 | 120.0 |
| Հավաքարար | 2 | 30.0-42.0 | 1089.6 | 864.0 | 225.6 |
| Վարորդ | 1 | 40.0 | 600.0 | 480.0 | 120.0 |
| Պահակ | 1 | 30.0 | 462.0 | 360.0 | 102.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ընդամենը | ***38*** | | ***44293.2*** | ***37320.0*** | ***6973.2*** |

Ծանոթություն: Աղյուսակում ներկայացված աշխատավարձի և սոցիալական ապահովագրության գումարների տարեկան ծախսերի հաշվարկը կատարվել է՝ ելնելով կոնկրետ համայնքում կոնկրետ հաստիքային միավորի համար հաստատված դրույքաչափից : Այն հաստիքների դեպքում, որոնց քանակը 1-ից ավելի է, հաշվարկները ներկայացված են ստորև:

- **Համայնքի ղեկավար**

Ամսեկան աշխատավարձ = 1*160.0+1*130.0+1*180.0+1*180.0+1*180.0 = 830.0 հազ. դրամ
Տարեկան աշխատավարձ = 12*830.0 = 9960.0 հազ. դրամ
Ամսեկան սոցապ. հատկացումներ = 1*(19.0+(160.0-100.0)*5%)+1*(19.0+(130.0-100.0)*5%)+1*(19.0+(180.0-100.0)*5%)+1*(19.0+(180.0-100.0)*5%)+1*(19.0+(180.0-100.0)*5%) = 111.5 հազ. դրամ
Տարեկան սոցապ. հատկացումներ = 12*111.5 = 1338.0 հազ. դրամ

- **Համայնքի ղեկավարի տեղակալ**

Ամսեկան աշխատավարձ = 1*120.0+1*80.0+1*90.0 = 290.0 հազ. դրամ
Տարեկան աշխատավարձ = 12*290.0 = 3480.0 հազ. դրամ
Ամսեկան սոցապ. հատկացումներ = 1*(19.0+(120.0-100.0)*5%)+1*(7.0+(80.0-20.0)*15%)+1*(7.0+(90.0-20.0)*15%) = 53.5 հազ. դրամ
Տարեկան սոցապ. հատկացումներ = 12*53.5 = 642.0 հազ. դրամ

- **Աշխատակազմի քարտուղար**

Ամսեկան աշխատավարձ = 1*125.0+1*100.0+1*85.0+1*78.0+1*102.0= 490.0 հազ. դրամ
Տարեկան աշխատավարձ = 12*490.0 = 5880.0 հազ. դրամ
Ամսեկան սոցապ. հատկացումներ = 1*(19.0+(125.0-100.0)*5%)+1*19.0+1*(7.0+(85.0-20.0)*15%)+1*(7.0+(78.0-20.0)*15%)+1*(19.0+(102.0-100.0)*5%) = 90.8 հազ. դրամ
Տարեկան սոցապ. հատկացումներ = 12*90.8 = 1089.6 հազ. դրամ

- **Գլխավոր մասնագետ - ֆինանսիստ**

Ամսեկան աշխատավարձ = 1*80.0+1*72.5+1*96.0 = 248.5 հազ. դրամ
Տարեկան աշխատավարձ = 12*248.5 = 2982.0 հազ. դրամ
Ամսեկան սոցապ. հատկացումներ = 1*(7.0+(80.0-20.0)*15%)+1*(7.0+(72.5-20.0)*15%)+1*(7.0+(96.0-20.0)*15%) = 49.3 հազ. դրամ
Տարեկան սոցապ. հատկացումներ = 12*49.3 = 591.6 հազ. դրամ

- **Գլխավոր մասնագետ - հաշվապահ**

Ամսեկան աշխատավարձ = 1*80.0+1*72.5+1*96.0 = 248.5 հազ. դրամ
Տարեկան աշխատավարձ = 12*248.5 = 2982.0 հազ. դրամ
Ամսեկան սոցապ. հատկացումներ = 1*(7.0+(80.0-20.0)*15%)+1*(7.0+(72.5-20.0)*15%)+1*(7.0+(96.0-20.0)*15%) = 49.3 հազ. դրամ
Տարեկան սոցապ. հատկացումներ = 12*49.3 = 591.6 հազ. դրամ

- **Առաջատար մասնագետ**

Ամսեկան աշխատավարձ = 1*65.0+1*60.0+2*55.0+2*73.5+2*50.0 = 482.0 հազ. դրամ
Տարեկան աշխատավարձ = 12*482.0 = 5784.0 հազ. դրամ
Ամսեկան սոցապ. հատկացումներ = 1*(7.0+(65.0-20.0)*15%)+1*(7.0+(60.0-20.0)*15%)+2*(7.0+(55.0-20.0)*15%)+ 2*(7.0+(73.5-20.0)*15%)+2*(7.0+(50.0-20.0)*15%) = 104.4 հազ. դրամ
Տարեկան սոցապ. հատկացումներ = 12*104.4 = 1252.8 հազ. դրամ

- **Համակարգչային օպերատոր**

Ամսեկան աշխատավարձ = 1*43.0+1*45.0+35.0 = 123.0 հազ. դրամ
Տարեկան աշխատավարձ = 12*123.0 = 1476.0 հազ. դրամ
Ամսեկան սոցապ. հատկացումներ = 1*(7.0+(43.0-20.0)*15%)+1*(7.0+(45.0-20.0)*15%)+1*(7.0+(35.0-20.0)*15%) = 30.6 հազ. դրամ
Տարեկան սոցապ. հատկացումներ = 12*30.6 = 367.2 հազ. դրամ

- **Հավաքարար**

Ամսեկան աշխատավարձ = 1*30.0+1*42.0 = 72.0 հազ. դրամ
Տարեկան աշխատավարձ = 12*72.0 = 864.0 հազ. դրամ
Ամսեկան սոցապ. հատկացումներ = 1*(7.0+(30.0-20.0)*15%)+1*(7.0+(42.0-20.0)*15%) = 18.8 հազ. դրամ

Տարեկան սոցապ. հատկացումներ = 12*18.8 = 225.6 հազ. դրամ

Նոր ձևավորված համայնքի հաստիքացուցակն առաջարկելիս կիրառվել է 1-ին մոտեցումը՝ որոշ վերապահումներով: Մասնավորապես, վերապահումները վերաբերվում են գլխավոր մասնագետ (ֆինանսիստ-հաշվապահ) և մեքենագրուհի հաստիքներին, որոնք զրոյացվել են, քանի որ նոր ձևավորվող համայնքում առանձին-առանձին պահպանվելու են ֆինանսիստի և հաշվապահի, ինչպես նաև համակարգչային օպերատորի հաստիքներ: Որոշակի ճշգրտումներ են արվել նաև առաջատար մասնագետների և հավաքարարի աշխատավարձերը սահմանելիս: Այսպես, առաջատար մասնագետների աշխատավարձերը սահմանելիս հիմք է ընդունվել գործող համայնքներում այդ հաստիքի դրույքաչափերի միջին կշռված արժեքը՝ ավելացնելով 20 %-ով, իսկ հավաքարարի աշխատավարձը հավասարեցվել է պահակի աշխատավարձին:

Եվ այսպես, ընտրված համայնքների խոշորացման դեպքում նոր ձևավորվող համայնքում փորձագիտական գնահատմամբ առաջարկվում է ձևավորել 19 միավոր հաստիքներ, որոնց պահպանման համար կպահանջվի 22287.4 հազ. դրամ, որից աշխատավարձի գծով ծախսերը կկազմեն 18552.0 հազ. դրամ, իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսերը՝ 3735.4 հազ. դրամ (տես աղյուսակ 24):

Աղյուսակ 24. Արենի խոշորացվող համայնքի աշխատակիցների թիվն ու նրանց պահպանման հետ կապված ծախսերը

| **Անվանում** | **Հաստիքային միավոր** | **Դրույքաչափ (հազ. դրամ)** | **Տարեկան ծախս (հազ. դրամ)** | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **Ընդամենը** | **Աշխատավարձ** | **Սոցապ. հատկացումներ** |
| Համայնքի ղեկավար | 1 | 216.0 | 2889.6 | 2592.0 | 297.6 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 144.0 | 1982.4 | 1728.0 | 254.4 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 150.0 | 2058.8 | 1800.0 | 258.8 |
| Գլխավոր մասնագետ - ֆինանսիստ | 1 | 115.0 | 1617.7 | 1380.0 | 237.7 |
| Գլխավոր մասնագետ - հաշվապահ | 1 | 115.0 | 1617.7 | 1380.0 | 237.7 |
| Գլխավոր մասնագետ – մեթոդիստ | 1 | 96.0 | 1372.8 | 1152.0 | 220.8 |
| Ջրաբաշխ | 1 | 48.0 | 710.4 | 576.0 | 134.4 |
| Առաջատար մասնագետ | 4 | 72.0 | 4492.8 | 3456.0 | 1036.8 |
| Համակարգչային օպերատոր | 1 | 54.0 | 793.2 | 648.0 | 145.2 |
| Հավաքարար | 1 | 36.0 | 544.8 | 432.0 | 112.8 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Վարորդ | 1 | 48.0 | 710.4 | 576.0 | 134.4 |
| Պահակ | 1 | 36.0 | 544.8 | 432.0 | 112.8 |
| Ընդամենը | ***15*** | | ***19335.4*** | ***16152.0*** | ***3183.4*** |
| Վարչական ներկայացուցիչ | 4 | 50.0 | 2952.0 | 2400.0 | 552.0 |
| Ընդամենը | ***19*** | | ***22287.4*** | ***18552.0*** | ***3735.4*** |

Արդյունքում ստացվում է, որ դիտարկվող համայնքների խոշորացման դեպքում միայն աշխատակազմերի օպտիմալացման հաշվին կարող են կրկնակի անգամ կրճատվել թե գործող հաստիքների թիվը և թե դրանց պահպանման հետ կապված ծախսերը: Գումարային արտահայտությամբ այդ ծախսերի տնտեսումը կազմում է 22005.8 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 49.7 %-ը), որից աշխատավարձի գծով ծախսի տնտեսումը կազմում է 18768.0 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 50.3 %-ը), իսկ սոցիալական ապահովագրության գծով ծախսի տնտեսումը՝ 3237.8 հազ. դրամ (կամ նախկին ծախսի 46.4 %-ը):

Համայնքների խոշորացման արդյունքում միայն աշխատավարձի գծով ծախսը չէ, որ կարող է տնտեսվել: Միանշանակ կարելի է ասել, որ զգալի տնտեսումներ կլինեն նաև նախկին համայնքների վարչական շենքերի պահպանման ծախսերի գծով, քանի որ խոշորացման արդյունքում անհրաժեշտություն կառաջան պահպանել ընդամենը մեկ վարչական շենք: Բացի այդ, հնարավոր է, որ տնտեսումներ լինեն նաև գործող հիմնարկների պահպանման գծով: Խոշորացվող համայնքներում գործում են հետևյալ հիմնարկները .

- Արենի՝ բուժկետ, դպրոց, գրադարան
- Խաչիկ՝ բուժկետ, դպրոց, գրադարան
- Ելփին՝ բուժկետ, դպրոց, գրադարան
- Չիվա՝ բուժկետ, դպրոց, գրադարան
- Ռինդ՝ բուժկետ, դպրոց, գրադարան

Փաստորեն, նշյալ համայնքների խոշորացման արդյունքում նոր ձևավորված համայնքում գործելու են՝ 5 բուժկետ, 5 դպրոց և 5 գրադարան: Կարելի է ենթադրել, որ որոշ չափով կկրճատվի, օրինակ, գրադարանների թիվը, ինչը դարձյալ կհանգեցնի որոշակի տնտեսումների:

Ասվածը նշանակում է, որ հաշվարկված 22005.8 հազ. դրամը այն նվազագույն գումարն է, որը կտնտեսվի դիտարկվող համայնքների խոշորացման արդյունքում: Եվ մյուս տնտեսումներն էլ հաշվի առնելու դեպքում այն կարող է լինել ավելին:

Խոշորացման արդյունքում տնտեսվող նվազագույն գումարը խոշորացվող համայնքների բյուջետային ծախսերի հետ համադրելիս պարզ է դառնում, որ տնտեսվող 22005.8 հազ. դրամը մի փոքր ավելին է, քան Ռինդ համայնքի 2009 թ. բյուջեի ծախսերը կամ մի փոքր է զիջում Արենի համայնքի բյուջեի ծախսերին (տես աղյուսակ 25):

Աղյուսակ 25. Խոշորացվող համայնքների 2009 թ. բյուջեների փաստացի ծախսերը գործառնական դասակարգմամբ

| Հ/Հ | Համայնք | Ընդամենը Ծախս | Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ | կան հարաբերություն | միջավայրի պաշտպ | կոմունալ տնտեսու | Առողջապահությ | ուն, մշակույթ և | Կրթություն | ական պաշտպանությու |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | եր | եր | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Վարչական բյուջե | Ֆոնդային բյուջե | | | | | | | |
| 1 | Արենի | 23,807.3 | 12,959.4 | 496.3 | 1,289.8 | 1,919.2 | 1,243.0 | - | 2,952.6 | 662.0 | 2,285.0 |
| 2 | Խաչիկ | 14,203.6 | 10,258.0 | - | 1,360.0 | - | - | - | 1,585.6 | - | 1,000.0 |
| 3 | Ելփին | 17,037.8 | 11,840.2 | - | 1,360.0 | - | 50.0 | - | 2,687.6 | - | 1,100.0 |
| 4 | Չիվա | 14,742.5 | 10,526.9 | 1,294.0 | 660.0 | 200.0 | - | - | 1,261.6 | - | 800.0 |
| 5 | Ռինդ | 20,983.9 | 13,126.3 | - | 660.0 | 400.0 | 1,825 | 448.0 | 2,673.8 | 1,385.8 | 465.0 |

*(հազ. դրամ)*

Ինչպես արդեն նշվել է, տնտեսական արդյունավետության գնահատման տարածված ցուցանիշներից են բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերն ու վարչական ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի կազմում:

Դիտարկվող համայնքներում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը տատանվում են 7285.2 դրամից մինչև 11510.1 դրամի սահմաններում, միջինը կազմելով 8890.7 (տես աղյուսակ 26): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (22005.8 հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում բնակչության մեկ շնչին ընկնող վարչական ծախսերը կկազմեն առավելագույնը (քանի որ ակնկալվում են նաև այլ տնտեսումներ, օրինակ, վարչական շենքերի պահպանման հետ կապված ծախսերի գծով) 5656.9 դրամ: Նման ցուցանիշ ոչ մի համայնքում չի գրանցվել: Այս ցուցանիշը փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.29-ից մինչև 2.03 անգամ:

Աղյուսակ 26. Խոշորացվող համայնքների վարչական ծախսերի որոշ բնութագրիչներ

| ՀՀ | Համայնք | Բնակչություն | Մեկ շնչին ընկնող վարչական ծախսեր | Վարչական ծախսերն ընդհանուր ծախսերի կազմում |
|---|---|---|---|---|
| 1 | Արենի | 1847 մարդ | 7,285.2 մարդ | 56.5 % |
| 2 | Խաչիկ | 1030 մարդ | 9,959.2 մարդ | 72.2 % |
| 3 | Ելփին | 1383 մարդ | 8,561.2 մարդ | 69.5 % |
| 4 | Չիվա | 1027 մարդ | 11,510.1 մարդ | 80.2 % |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | Ռինդ | 1518 մարդ | 8,647.1 մարդ | 62.6 % |

Դիտարկվող համայնքներում ընդհանուր ծախսերի կազմում վարչական ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 56.5 %-ից մինչև 80.2 %-ի սահմաններում (տես աղյուսակ 26): Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի նվազագույն տնտեսման հաշվին (22005.8 հազ. դրամ) նոր ձևավորված համայնքում այդ ցուցանիշը կկազմի առավելագույնը (քանի որ ակնկալվում են նաև այլ տնտեսումներ) 42.4 %: Նման ցուցանիշ չի գրանցվել դիտարկվող համայնքներից և ոչ մեկում: Այն փոքր է դիտարկվող համայնքների համապատասխան ցուցանիշներից 1.3-ից մինչև 1.9 անգամ:

Վայոց Ձորի մարզում համայնքների խոշորացման հնարավոր հետևանքները ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների վրա

Համայնքների բյուջեների բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ մեծամասնություն կազմող համայնքների բյուջեների եկամուտների գրեթե կեսը ձևավորվում են պետական բյուջեի ստացվող պաշտոնական տրանսֆերտների, իսկ հիմնականում՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին: Այս առումով բացառություն չեն կազմում նաև Վայոց Ձորի համայնքները:

Ասվածը նշանակում է, որ համայնքների խոշորացման հարցը քննարկելիս պետք չէ անտեսել խոշորացման արդյունքում պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հնարավոր փոփոխությունները:

Ներկայումս մշակվել և Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ, համաձայն որի ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկման հիմքում կդրվի ոչ միայն համայնքների եկամտային ունակությունը, այլ նաև նրանց ծախսային կարիքները՝ հաշվի առնելով համայնքների այնպիսի յուրահատկություններ, ինչպիսիք են՝ համայնքի բնակչության թիվը, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի թիվը, համայնքի բնակչության տարիքային կառուցվածքը, համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից և մայրաքաղաքից, համայնքի լեռնային կամ բարձր լեռնային լինելը և այլն:

Համայնքների խոշորացման արդյունքում ֆինանսական համահարթեցման դոտացիաների հնարավոր փոփոխությունները հաշվարկվել են թե գործող օրենքի և թե նոր օրենքի նախագծի հիման վրա:

Աղյուսակ 27-ում ներկայացված են խոշորացվող համայնքների 2010 թ. ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարները՝ հաշվարկված նոր և գործող օրենքների հիման վրա:

Աղյուսակ 27. Խոշորացվող համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիաները (հազ. դրամ)

| ՀՀ | Համայնք | Հաշվարկված նոր օրենքի նախագծի հիման վրա | Հաշվարկված գործող օրենքի հիման վրա |
|---|---|---|---|
| | Շատին համայնք | | |
| 1 | Աղնջաձոր | 10329.0 | 5370.0 |
| 2 | Արտաբույնք | 18328.8 | 14395.7 |
| 3 | Գողթանիկ | 7727.4 | 3500.0 |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | Եղեգիս | 10504.8 | 5603.8 |
| 5 | Թառաթումբ | 12274.6 | 7546.5 |
| 6 | Հերմոն | 7401.6 | 3500.0 |
| 7 | Հորբատեղ | 8251.9 | 3500.0 |
| 8 | Հորս | 8455.3 | 3413.5 |
| 9 | Շատին | 27586.7 | 25139.1 |
| 10 | Սալլի | 7720.3 | 3500.0 |
| 11 | Վարդահովիտ | 7938.6 | 3500.0 |
| 12 | Քարագլուխ | 15518.6 | 10754.0 |
| | Ընդամենը | ***142037.6*** | ***89722.6*** |
| | Եղեգնաձոր համայնք | | |
| 1 | Եղեգնաձոր | 79,233.1 | 90,152.6 |
| 2 | Ագարակաձոր | 19,101.4 | 16,194.2 |
| 3 | Գնիշիկ | 7,624.9 | 3,500.0 |
| 4 | Գետափ | 29,173.7 | 28,010.1 |
| 5 | Արփի | 17,414.7 | 14,056.5 |
| 6 | Աղավնաձոր | 24,578.4 | 20,987.9 |
| 7 | Գլաձոր | 31,721.5 | 31,051.9 |
| 8 | Վերնաշեն | 17,911.0 | 14,551.1 |
| | Ընդամենը | ***226,758.7*** | ***218,504.30*** |
| | Ջերմուկ համայնք | | |
| 1 | Ջերմուկ | 68,792.3 | 52,010.0 |
| 2 | Գնդեվազ | 16,384.8 | 10,976.2 |
| | Ընդամենը | ***85,177.10*** | ***62,986.20*** |
| | Վայք համայնք | | |
| 1 | Վայք | 61,625.2 | 66,820.1 |
| 2 | Արին | 7,479.9 | 3,500.0 |
| 3 | Ազատեկ | 10,053.4 | 5,173.5 |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | Արտավան | 8,116.7 | 3,500.0 |
| 5 | Սարավան | 7,496.1 | 3,500.0 |
| 6 | Փոռ | 6,494.6 | 3,500.0 |
| 7 | Հերհեր | 15,780.8 | 10,838.5 |
| 8 | Կարմրաշեն | 8,123.4 | 3,500.0 |
| 9 | Ձեդեա | 6,884.5 | 3,500.0 |
| | Ընդամենը | ***132,054.60*** | ***103,832.10*** |
| | Չառիթափ համայնք | | |
| 1 | Չառիթափ | 12,274.6 | 7,546.5 |
| 2 | Բարձրունի | 8,782.7 | 3,946.9 |
| 3 | Գոմք | 7,919.3 | 3,500.0 |
| 4 | Խնձորուտ | 11,564.4 | 6,334.6 |
| 5 | Մարտիրոս | 12,487.5 | 7,290.0 |
| 6 | Նոր Ազնաբերդ | 6,603.3 | 3,611.2 |
| 7 | Սերս | 7,699.5 | 3,500.0 |
| | Ընդամենը | ***67,331.3*** | ***35,729.2*** |
| | Արենի համայնք | | |
| 1 | Արենի | 23,512.7 | 18,732.2 |
| 2 | Խաչիկ | 17,041.4 | 11,788.4 |
| 3 | Ելփին | 19,828.2 | 15,523.6 |
| 4 | Չիվա | 15,830.9 | 11,494.3 |
| 5 | Ռինդ | 21,857.0 | 17,753.1 |
| | Ընդամենը | ***98,070.2*** | ***75,291.6*** |

Աղյուսակ 27-ի տվյալները ցույց են տալիս, որ մարզի բոլոր համայնքները, բացառությամբ Վայք և Եղեգնաձոր համայնքների, կստանան ավելի շատ ֆինանսական համահարթեցման դոտացիաներ նոր օրենքը կիրառելու դեպքում:

Հետաքրքիր է դիտարկել, թե որքան կկազմեն ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարները համայնքների խոշորացումից հետո (տես աղյուսակ 28):

Աղյուսակ 28. Համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիաները խոշորացումից առաջ և հետո

(հազ. դրամ)

| Հ Հ | Համայնք | Հաշվարկված նոր օրենքի նախագծի հիման վրա | | Հաշվարկված գործող օրենքի հիման վրա | |
|---|---|---|---|---|---|
| | | **Նախքան խոշորացները հանրագումարային թիվ** | **Խոշորացումից հետո** | **Նախքան խոշորացները հանրագումարային թիվ** | **Խոշորացումից հետո** |
| 1 | Շատին | 142,037.6 | 128,926.8 | 89,722.6 | ≈ 80,000.0 |
| 2 | Եղեգնաձոր | 226,758.7 | 275,782.6 | 218,504.3 | ≈ 200,000.0 |
| 3 | Ջերմուկ | 85,177.1 | 86,099.5 | 62,986.20 | ≈ 82,000.0 |
| 4 | Վայք | 132,054.6 | 133,588.2 | 103,832.1 | ≈ 93,000.0 |
| 5 | Զառիթափ | 67,331.3 | 64,593.9 | 35,729.2 | ≈ 40,000.0 |
| 6 | Արենի | 98,070.2 | 91,476.0 | 75,291.6 | ≈ 80,000.0 |

Աղյուսակ 29-ի տվյալները ցույց են տալիս, որ թե նոր օրենքի նախագծի և թե գործող օրենքի հիման վրա հաշվարկելու դեպքում համայնքների խոշորցման արդյունքում դոտացիների գումարը կարող է լինել ավելի քիչ, քան խոշորացվող համայնքների դոտացիաների հանրագումարն է:

Աղյուսակ 29. Համայնքների խոշորացման արդյունքում ֆինանսական համահարթեցման դոտացիաների գծով առաջացող օգուտներն ու վնասները (հազ. դրամ)

| Հ Հ | Համայնք | Հաշվարկված նոր օրենքի նախագծի հիման վրա | | Հաշվարկված գործող օրենքի հիման վրա | |
|---|---|---|---|---|---|
| | | **Գումար** | **%** | **Գումար** | **%** |
| 1 | Շատին | -13,110.8 | -9.2 | -9,722.6 | -10.8 |
| 2 | Եղեգնաձոր | +49,023.9 | +21.6 | -18,504.3 | -8.5 |
| 3 | Ջերմուկ | +922.4 | +1.1 | +19,013.8 | +30.2 |
| 4 | Վայք | +1,533.6 | +1.2 | -10,832.1 | -10.4 |
| 5 | Զառիթափ | -2,737.4 | -4.1 | +4,270.8 | +12.0 |
| 6 | Արենի | -6,594.2 | -6.7 | +4,708.4 | +6.3 |

Չնայած այն հանգամանքին, որ տարբեր համայնքներում տարբեր միտումներ են նկատվում, այնուամենայնիվ, աղյուսակ 28-ի տվյալներից կարելի է նկատել մի

օրինաչափություն, այն է՝ խոշորացումից հետո նոր ձևավորվող համայնքները ֆինանսական համահարթեման դոտացիաների գծով կստանան ավելի շատ գումար, եթե վերջիններս հաշվարկվեն նոր օրենքի նախագծի և ոչ թե գործող օրենքի հիման վրա: Մասնավորապես,

- Շատին համայնքը կստանա 1.61 անգամ ավելի գումար
- Եղեգնաձոր համայնքը կստանա 1.38 անգամ ավելի գումար
- Ջերմուկ համայնքը կստանա 1.05 անգամ ավելի գումար
- Վայք համայնքը կստանա 1.44 անգամ ավելի գումար
- Զառիթափ համայնքը կստանա 1.61 անգամ ավելի գումար
- Արենի համայնքը կստանա 1.14 անգամ ավելի գումար

Նշյալ թվերը խոսում են այն մասին, որ նպատակահարմար է համայնքների խոշորացման գործընթացն իրականացնել 'ֆինանսական հանահարթեցման մասին' նոր օրենքի ներդրմանը զուգահեռ, ինչը հնարավորություն կտա խոշորացման գործընթացը համայնքների համար դարձնել տնտեսապես առավել նպատակահարմար:

## Վայոց Ձորի մարզում համայնքների խոշորացման ադրյունքում առաջացող այլ տնտեսական օգուտները

Ինչպես արդեն բազմիցս նշվել է, համայնքների խոշորացման արդյունքում կարող են տնտեսումներ առաջանալ նաև գործող հիմնարկների կրճատման հաշվին: Խոսքը, մասնավորապես, վերաբերվում է մանկապարտեզներին և գրադարաններին:

### <u>Մանկապարտեզների կրճատումից առաջացող տնտեսական օգուտները</u>

***Եղեգնաձոր համայնք*** - Եղեգնաձոր համայնքում կան 8 մանկապարտեզներ, 3-ը համայնքի կենտրոնում, և մեկական Ագարակաձոր, Գետափ, Աղավնաձոր, Գլաձոր և Վերնաշեն բնակավայրերում: Համայնքի բնակավայրերի տարածական բաշխվածության ուսումնասիրրությունը հնարավորություն է տալիս ենթադրել, որ մեկական մանկապարտեզ անհրաժեշտ կլինի Աղավնաձոր և Գնիշիկ բնակավայրերում, քանի որ այս բնակավայրերը հեռու են համայնքի կենտրոնից, և բնակիչները չեն կարող օգտվել համայնքի կենտրոնի մանկապարտեզներից, իսկ Ագարակաձոր, Գետափ, Արփի, Գլաձոր և Վերնաշեն բնակավայրերի բնակիչները կարող են օգտվել համայնքի կենտրոնի 3 մանկապարտեզներից: Այսինքն, կարելի է ակնկալել, որ կտնտեսվեն Ագարակաձոր (457 հազ. դրամ), Գետափ (1324,4 հազ. դրամ), Գլաձոր (8445,9 հազ. դրամ) և Վերնաշեն (4272,8 հազ. դրամ) բնակավայրերի մանկապարտեզների պահպանման ծախսերը և կավելանան Գնիշիկ բնակավայրի մանակապարտեզի պահպանման ծախսերը:

Ընդհանուր տնտեսումը կկազմի 14500 հազ. դրամ: Եթե ենթադրենք, որ Գնիշիկի մանկապարտեզի պահպանման ծախսերը կկազմեն շուրջ 3000-4000 հազ. դրամ, ապա կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ Եղեգնաձոր համայնքում խոշորացման արդյունքում մանկապարտեզների կրճատման հաշվին կտնտեսվի մոտավորապես 10000 հազ. դրամ:

***<u>Ջերմուկ համայնք</u>*** - Ջերմուկ համայնքում կան 4 մանկապարտեզներ՝ 3-ը համայնքի կենտրոնում և 1-ը Գնդեվազ բնակավայրում: Ենթադրվում է, որ Ջերմուկ համայնքում մանկապարտեզների կրճատում տեղի չի ունենա, քանի որ Գնդեվազ բնակավայրը հեռու է գտնվում համայնքի կենտրոնից և մանկապարտեզի կրճատման արդյունքում այդ ծառայությունը կդառնա դժվարամատչելի Գնդեվազի բնակիչների համար:

***<u>Վայք համայնք</u>*** - Վայք համայնքում կան 4 մանկապարտեզներ՝ 2-ը համայնքի կենտրոնում և մեկական Ազատեկ և Հերհեր բնակավայրերում: Համայնքի կազմի մեջ

մտնող բնակավայրերի տարածական բաշխվածության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ համայնքների խոշորացման արդյունքում մանկապարտեզների փակում և գումարների տնտեսում չարժե ակնկալել: Այսպես, Ազատեկի մանկապարտեզից կարող են օգտվել Ջերմուկ և Փոռ բնակավայրերի բնակիչները, Վայքի մանկապարտեզից՝ Արինի բնակիչները, Հերհերի մանկապարտեզից Կարմրաշենի բնակիչները: Արտավան և Սարավան բնակավայրերը բավականին հեռու են գտնվում նշյալ բնակավայրերից որևէ մեկի մանկապարտեզից օգտվելու համար: Այսինքն, եթե նույնիսկ ենթադրենք, որ կփակվի Վայքի 2 մանկապարտեզներից որևէ մեկը, ապա միևնույն է, Արտավան և Սարավան բնակավայրերը սպասարկելու համար անհրաժեշտ կլինի նոր մանկապարտեզ: Այսինքն, մանկապարտեզների թիվը համայնքում դժվար թե կրճատվի, հնարավոր են տեղափոխություններ, ինչը ֆինանսական ծախսեր անպայմանորեն կառաջացնի: Ասվածը նշանակում է, որ համայնքում մանկապարտեզների կրճատում և այդ գծով գումարների խնայողություն դժվար թե լինի:

***Զառիթափ համայնք*** - Զառիթափ համայնքում կան 2 մանկապարտեզներ՝ Զառիթափ և Մարտիրոս բնակավայրերում: Համայնքի բնակավայրերի տեղաբաշխվածության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ենթադրել, որ, օրինակ, Խնձորուտ և Նոր Ազնաբերդ բնակավայրերի հեռավորությունը Զառիթափ բնակավայրից այնքան է, որ նշյալ բնակավայրի մանկապարտեզի ծառայությունը հասանելի չի դառնում այդ բնակավայրերի համար: Ասվածը նշանակում է, որ այդ բնակավայրերում անհրաժեշտ է նոր մանկապարտեզ: Կարելի է, օրինակ, Մարտիրոս բնակավայրի մանկապարտեզը տեղափոխել, և Մարտիրոս ու Գոմք բնակավայրերի բնակիչները կօգտվեն Զառիթափի մանկապարտեզից: Ամեն դեպքում, անկախ նրանից, թե ինչ կարվի, պետք չէ ակնկալել, որ համայնքի խոշորացման արդյունքում կկրճատվեն մանկապարտեզներ և գումարներ կտնտեսվեն:

***Շատին համայնք*** - Շատին համայնքում կա ընդամենը 1 մանկապարտեզ՝ համայնքի կենտրոն հանդիսացող Շատին բնակավայրում: Հավանական է, որ մեկ մանկապարտեզը չի կարող սպասարկել համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի բնակիչներին: Ասվածը նշանակում է, որ չի կարելի ակնկալել, որ խոշորացման արդյունքում Շատին համայնքում մանկապարտեզների կրճատում և դրա հաշվին գումարների տնտեսում կլինի:

***Արենի համայնք*** - Արենի համայնքում չկան մանկապարտեզներ:

Այսպիսով, Վայոց Ձորի մարզում համայնքների խոշորացման արդյունքում մանկապարտեզների կրճատման հաշվին առաջացող տնտեսական օգուտները կկազմեն շուրջ 10000.0 հազ. դրամ:

## Գրադարանների կրճատումից առաջացող տնտեսական օգուտները

Գրադարանների կրճատումից առաջացող տնտեսական օգուտները հաշվելու համար ենթադրվել է, որ բոլոր այն գյուղական բնակավայրերում, որտեղ կան գրադարաններ, գրքային ֆոնդերը կհանձնվեն գյուղերի դպրոցներին և հետևաբար գրադարանների հետ կապված ծախսերը կտնտեսվեն: Քաղաքային բնակավայրերի գրադարանները նույնությամբ կշարունակեն գործել, հետևաբար քաղաքային բնակավայրերում գրադարնների պահպանման ծախսերի տնտեսում չի ակնկալվում:

Գյուղական բնակավայրերում գրադարանների պահպանման ծախսերը հաշվարկելու համար դարձյալ կիրառվել է ծախսերի նվազագույն կրճատման գաղափարը: Այսինքն, ենթադրվել է, որ այն բնակավայրում, որտեղ կա գրադարան, կլինի առնվազն մեկ

գրադարանավար, որի աշխատավարձը կլինի առնվազն նվազագույն աշխատավարձի չափ: Հետևաբար այդ բնակավայրերում գրադարնների փակման արդյունքում կտնտեսվի առնվազն մեկ աշխատողի նվազագույն աշխատավարձին համարժեք գումար, այն է՝

Տարեկան աշխատավարձ՝ 30.0*12 ամիս = 360.0 հազ. դրամ

Տարեկան սոցապ հատկացումներ՝ (7.0+(30.0–20.0)*15%)*12 ամիս = 102.0 հազ. դրամ

Ընդամենը տնտեսվող գումար՝ 360.0+102.0 = 462.0 հազ. դրամ

Այսինքն՝ ստացվում է, որ յուրաքանչյուր գյուղական բնակավայրում, որտեղ կա գրադարան, կտնտեսվի առնվազն 462.0 հազ. դրամ գումար:

***Եղեգնաձոր համայնք*** – Եղեգնաձորում կան 5 գրադարաններ, որոնցից մեկը Եղեգնաձոր քաղաքում: Այսինքն, տնտեսումներ կառաջանան 4 գյուղական բնակավայրերի գրադարանների փակման արդյունքում:

Տնտեսման նվազագույն գումարը կկազմի՝

4*462.0 հազ. դրամ = 1848.0 հազ. դրամ

***Ջերմուկ համայնք*** – Ջերմուկում կան 2 գրադարաններ, որոնցից մեկը Ջերմուկ քաղաքում: Այսինքն, տնտեսումներ կառաջանան 1 գյուղական բնակավայրի գրադարանի փակման արդյունքում:

Տնտեսման նվազագույն գումարը կկազմի՝

1*462.0 հազ. դրամ = 462.0 հազ. դրամ

***Վայք համայնք*** – Վայքում կան 8 գրադարաններ, որոնցից մեկը Վայք քաղաքում: Այսինքն, տնտեսումներ կառաջանան 7 գյուղական բնակավայրերի գրադարանների փակման արդյունքում:

Տնտեսման նվազագույն գումարը կկազմի՝

7*462.0 հազ. դրամ = 3234.0 հազ. դրամ

***Զառիթափ համայնք*** – Զառիթափում կան 4 գրադարաններ, բոլորն էլ գյուղական բնակավայրերում:

Տնտեսման նվազագույն գումարը կկազմի՝

4*462.0 հազ. դրամ = 1848.0 հազ. դրամ

***Շատին համայնք*** – Շատինում կան 10 գրադարաններ, բոլորն էլ գյուղական բնակավայրերում:

Տնտեսման նվազագույն գումարը կկազմի՝

10*462.0 հազ. դրամ = 4620.0 հազ. դրամ

***Արենի համայնք*** – Արենիում կան 5 գրադարաններ, բոլորն էլ գյուղական բնակավայրերում:

Տնտեսման նվազագույն գումարը կկազմի՝

5*462.0 հազ. դրամ = 2310.0 հազ. դրամ

Այսպիսով, Վայոց Ձորի մարզում համայնքների խոշորացման արդյունքում գրադարանների կրճատման հաշվին առաջացող նվազագույն տնտեսական օգուտները կկազմեն 14322.0 հազ. դրամ:

ԲԱԺԻՆ № 2